

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՅՄԱՆ ԼՊԱՏԱԿՈՎ ԷՔՍՊՈ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ

30.09.2013



Մեպտեմբերի 27-ը Ջրոսաշրջության համաշխարհային օրն է: Օրվա առթիվ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը Հյուսիսային պողոտայում կազմակերպել էր զբոսաշրջային էքսպո: 25 տաղավարներում ցուցադրվել են հանրապետության 10 մարզերը և ներգնա տուրիզմի ոլորտում գործունեություն ծավալող կառույցներ:

Ցուցահանդեսին ներկայացվել է նաև Կոտայքի մարզի տաղավարը: Մարզի երիտասարդները ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ.Մարգարյանի գլխավորությամբ ներկայացրել են մարզի մշակութային արժեքները և պատասխանել մի շարք հարցերի, մասնավորապես, Կ.Մարգարյանը հարցազրույցի շրջանակներում նշել է, որ Կոտայքը զբոսաշրջային մարզ է: Դեռևս 2011 թվականին հաստատվել է մարզի զարգացման քառամյա ծրագիր, որտեղ առանցքային տեղ է հատկացված զբոսաշրջությանը՝ սկսած զբոսաշրջային տարբեր ենթակառուցվածքների զարգացումից, մինչև մարզի մշակույթի, ավանդույթների արդյունավետ համադրում արդի զբոսաշրջության պահանջներին: